Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



19 NOV 2011

891.542.3
Բ-17

…Ի. ԲԱԶ.-ԱՂԲՋԱՆԵԱՆ

ԼԵԳԵՆԴՆԵՐ

1. Գեար. „Զէ".
2. Վերջին յարը
3. Սիրահարուած որդին.
4. Մօր կաթը.

ԲԱՔՈՒ
Տպարան Ն. Երուանդեանի
1904.

0 1 JAN 2009

891.542-3
f-17

ԳՐ. ԲԱՋ.-ԱՂԱՋԱՆԵԱՆ

ԼԵԳԵՆԴԱՆԵՐ

1001
1141

1. Դեւար. „Ձէ“.
2. Վերջին լարը.
3. Սիրահարուած որդին.
4. Մօր կաթը.

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
* Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ *

ԲԱԳՈՒ
Տպարան Ն. Երեւանցեանի
1904.

22926

26 .02. 2013

Дозволено Цензурою. Тифлисъ, 15 Декабря 1903 -.

ԳՏԱՐ—„Զ'Ք" *)

(Ազգային աւանդութիւն)

Հին ժամանակ երկու եղբայր
Անվախ ու քաջ, վիթխարի,
Քշում էին ամենայն օր
Հօտը իրենց տաւարի,
Դէպի գիւղի հովիտները
Ծաղկափթիթ ու կանաչ,
Դէպ սառնորակ աղբիւրները
Անուշահամ ու կարկաչ։
Երիտասարդ նախրչիքը
Երկար տարիք նամուսով,
Իրենք իրենց ցաւին դարման
Անում էին երկուսով։
Նորանց հօտը միշտ ապահով
Երեկոյեան հովերին,
Ուրախ բառաչ արձակելով
Յետ էր դալիս վերստին։
Իրեն օրում չէր պատահած
Որ հօտին մօտ դար գազան.

*) Գտա՞ր.—«Զ'ք»—մի զոյգ թռչուններէ անուններ են, որ ամառուայ գիշերներին տիւռր, միանուագ կանչում են իրար: Իմ հայրենիքում, Գանձակում եմ լսել այս աւանդութիւնը:

Բայց և մէկ օր տեսան տարած,
Մի աչքի լոյս,—չալ եղան։
Իսկոյն հօտը տարան. գիւղում
Մի լաւ մարդու պահ տուին,
Իսկ իրենք անտառներում
Սիրած եղան ձէն տուին։
Ջուտով տակն ու վրայ արին
Սաղ վաթանը հիմնովին,
Որջերը դիփ խուզարկեցին՝
Բայց եղանը չգտան։
Այնուհետև երկար օրեր
Ալօթեցին Աստծուն,
Որ պարգևէ Նորանց թևեր
Հեռու, հեռու թռչելու,
Որ սևերես գիւղ չդառնան
Ծաղր ու ծանակ լսելու։
Երբ մէկ օր էլ առաւօտուն
Անուշ ընից զարթեցան,
Տեսան արդէն դառած թռչուն՝
Վէր, վէր թռան ու անցան։
Ու մինչև օրս Նրանցից
Մէկը՝—գտա՞ր-է հարցնում,
Իսկ միւսը՝ „չ՛է, չ՛է"-է տրտմած
Պատասխանով ձայնակցում։

ՎԵՐՋԻՆ ԼԱՐԸ

(Հրէական լեգենդա)

Կէս գիշերին հարսանիքից վերադառնում էր մի երիտասարդ ջուլթակահար։ Ցոգնած ձեռքերը հազիւ էին տանում ջուլթակը։ Ցաւտրուլթիւնների մի ամբողջ շարք նորա միտքը գրաւել էր և նա անգիտակցաբար առաջ էր ընթանում... Ահա և այն գեղեցկուհի օրիորդը, որ իրեն սև՝ քան հարաւային գիշերը, ու փայլուն—քան մայիսեան ցողը կենդանի աչքերով. նա, որ իւր փափկիկ, դուրս ընկած, քան վարդը կարմիր թշերով, վայելչակազմ կրծքի վերայ հազիւ նշմարելի երկու թմբիկներով ու պարերի հմուտ շարժումներով մի մարմնացած ուշադրութիւն էր դարձրել բոլոր հանդիսատեսներին ու այդ ուշադրութիւնը ենթարկել մի հրաշալի ներդաշնակութեան... Ահա և այն պարոնը, որ միշտ նորան էր հետևում, աշխատում նորան հաճոյանալ, նորա հետ զրուցել... Ահա և ինքը ջուլթակը ձեռքին նուագում է մի անսպասելի ոգևորութեամբ ու աչք չհեռացնում գեղեցկուհու չքնաղ երեսից...

Յանկարծ մի անսովոր մռնչոց նորան ուշքի բերաւ։ Նա կանգնեց ու մի սառը հայեացք ձգեց իւր շորս կողմը... Հսկայ կաղնիների ստուար շարքերն էին միայն նորան շրջապատում։ Նա հասկա-

ցաւ, որ չեղուել է ճանապարհից. հասկացաւ և այն, որ գտնուում է անտառում...

Ի՞նչ անէր... Ո՞ւր գնար...

Մռնչոցը նորից լսուեց և ջուլթակահարը դարձնելով հայեացքը դէպի այն կողմը, նկատեց ինչ որ երկու սպսղուն կետեր, որոնք սկսեցին քիչ քիչ շատանալ։

Իմացաւ, որ շրջապատուած է գազաններով... ինչ պիտի անէր. մնացել էր շուարած...

Իսկ գազանները կամաց կամաց շատանում էին ու մօտենում։

Նա, ինչպէս և միշտ, այս անգամ էլ յոյսը դրեց ջուլթակի վերայ... ու չսխալուեց։ Նորա ախորժելի երաժշտութիւնը սառցրեց գիշատիչ գազանների կատաղութիւնը...

Ինչքան ուժ կար ու հմտութիւն, նա զործ էր դնում։

Յանկարծ լարի մէկը կտրուեց... Նա պահ մի շփոթուեց, բայց իրեն չկորցրեց ու երեք լարի վերայ սկսեց նուագել։

Իսկ գազանները շատանում էին հա շատանում ու քարացած մնում...

Ճուտով լարի երկրորդն էլ կտրուեց. նա սկսեց կասկածել իւր յաջողութեան վերայ ու թէև ոչ առաջուայ յաջողութեամբ, բայց և այնպէս դարձեալ նուագում էր, աշխատելով երկու լարի բացակայութիւնը ծածկել։

Յաջողութիւնը կասկածելի էր, որովհետև գազանները այլևս անշարժ չէին։

Ջուլթակահարի սիրտը սարսափ ընկաւ, երբ զգաց մահուան մերձաւորութիւնը... բայց շուտով այդ սարսափը տեղի տուաւ վստահութեան և նա շարունակեց նուագել կրկնակի ոգևորութեամբ։

Իսկ որքան նա ընկճուեց ու յուսահատուեց, երբ լարի երրորդն էլ կտրուեց... Այլևս կասկած չկար, որ գազանները նորան կտոր կտոր կանէին... Եւ իսկապէս. մի այնպիսի իրարանցում ընկաւ գազանների մէջ, որ նորա ձեռքերը խսպառ թուլացան...

„Օ՜, եթէ այդ էլ կտրուէ...“ մրմնջաց նա. բայց յանկարծ յուսոյ մի ճառագայթ նորա ոգևորութիւնը վերականգնեցրեց. նա յիշեց այն զեղեցկուհուն, որի դէմքի նուրբ գծագրութիւնները այնպէս սաստիկ ազդել էին նորա վերայ. նա ուզեց ապրել, ապրել հէնց նորա համար, նորա սիրոյն արժանանալու համար... և կեանքի արժէքը այդ վայրկեանին նորա աչքում խիստ բարձրացաւ. նա սկսեց վստահութեամբ նուագել... նորա ջուլթակի ձայնը այլևս չերերուեց մինչ այդ զողզողացող ձեռքերից, և գազանների իրարանցումը կամաց կամաց դադարեցրեց...

Մահուան և կեանքի մէջ մէկ լար էր մնացել... և այդ լարի վերայ խեղճ ջուլթակահարն էր նուա-

գում... Նա նուագում էր, իսկ հոգին լուսատու գեղեցկուհուց էր ստերսում այժ և ոգևորութիւն...

Իսկ այդ ժամանակամիջոցում լոյսը կամաց կամաց բացւում էր. նա զգաց վտանգի անցնելը և ուրախութեան մի ժպիտ փայլեց նորա այլայլուած դէմքին։

Գաղանները կամաց կամաց ցրուեցին...

Յոգնած ու տանջուած ջութակահարը ազատ շնչեց ու փառաբանելով չքնաղ գեղեցկուհուն և իւր արուեստը, յետ դարձաւ շեղուած ճանապարհից, վտանգաւոր անտառից։

ՍԻՐԱՀԱՐՈՒԱԾ ՈՐԴԻՆ

(Հայկական լեգենդա)

Պատուաւոր ու անուանի քաղաքացիներից մէկի որդին սիրահարւում է մի չքնաղ օրիորդի վերայ, որի մայրը յայտնի էր քաղաքումը իւր ոչ այնքան բարձր բարոյականութեամբ։ Այդ անցքը իմանում են երիտասարդի ծնողները և սկսում համոզել իրենց որդուն, որ յետ կանգնէ իւր այդ սխալ դիտաւորութիւնից, լուրջ հաշիւ տայ իրեն իւր արածի համար ու այդպիսով շարատարէ այսքան տարիների ընթացքում վաստակած անունը։ Որդու մտքումն անգամ չէ անցնում իւր սիրածին թողնելը։

—Ես աղջիկն եմ ուզում և ոչ թէ մայրը. ինչ՞ գործ ունեմ, թէ մայրը ինչ է եղել, կամ ինչ է. այդ ինձ համար միևնոյն է. աղջիկը լաւն է—էլ ուրիշ ոչինչ հարկաւոր չէ։

—Ո՛րդիս, այդպէս չէ կարելի խօսել. շար ծառից բարի պտուղ չէ կարելի սպասել, խէլքի եկ, թող գորան և այնուհետև ում ուզում ես մատնացոյց արա. որ գեղեցկուհուն հաւանում ես, ինձ յայտնիր, գործը գլուխ բերեմ։

—Ես հաւանում եմ Նորան և մատնացոյց անում դարձեալ Նորան. մեռնել կայ, ապրել կայ— Նորան ուզել կայ . . .

Երբ յոյսները կորում է, խնդրում են քահանայի միջամտութիւնը. բայց նա էլ չէ կարողանում ոչինչ անել իւր երկարատև քարոզներով ու խրատներով։

Տեսնելով որ ծաղր ու ծանակի պատճառ են դառնում ամբողջ քաղաքում, ծնողները վռնդում են Նորան, ասելով որ այդպիսի որդին միմիայն լիրը մարդկանց չէմբով կարող է մտնել։

Որդին հեծնում է իւր սեպհական միակ նժոյգը ու տխուր, գլխիկոր ուղեւորւում քաղաքից դուրս։

Ի՞նչ անէր. ծնողներին խնդրելու ոչ մի համարձակութիւն չունէր... օրիորդին թողնելը նոյնպէս անհնար էր համարում։ Թողնել երեսն ի վեր ծնողներին, այդպէս ամուսնանալ—նշանակում է բացել խղճի խայթոցի մի նոր աշխարհ . . . Այդպէս մտատանջուելով նա մօտենում էր քաղաքի աղբիւրին, երբ նկատեց ամենապատուաւոր ծերունիներից մէկին այնտեղ հանգստանալիս։ Ծերունին յայտնի էր մեծամտութեանը իւր խորհրդատու խելքով, որի համար էլ բոլորը Նորան „Գապի ջան“ էին կոչում։ Այդ ծերունու կարծիքը Նորանում համակրութիւն կարող էր գտնել. բայց ինչպէս հարցնէր, որ եթէ նա անցքից տեղեկութիւն անգամ ունենալիս լինէր—անաչառ վերաբերուէր։

Յանկարծ Նորա մտքումը մի միտք ծագեց և նա մի ակնթարթում նժոյգը մտրակեց դէպի աղբիւրից մօտ գտնուող հաստաբոյն ծառը ու ընթացքը ուղղեց ուղիղ դէպի Նորա բոյնը։ Չին հասաւ ծառին ու յետ դառաւ։ Երիտասարդը յետ քշեց ու նորից ուղղեց դէպի բոյնը. նժոյգը մռնչալով վերջին երկու ոտերի վրայ յետ գնաց։ Նա նորից մտրակեց ու նոյնը նորից կրկնեց։ Չին ամեն անգամից աւելի էր կատաղում, կարծես զարմանալով իւր տիրոջ անսովոր վարմունքից։

Ծերունին նկատեց, որ խեղճ նժոյգին խզուր է շարշարում տարարին երիտասարդը, մօտեցաւ Նորան ու քաղցր ասաց.

—Բալէս, ինչու՞ ես շարշարում նժոյգդ։

—Գապի ջան, պէտք է սորան ծառը բարձրացնեմ, ու նորից մտրակեց ձիուն։

Խեղճ ձին հէնց շուռ էր գալիս իւր տեղը, չհասկանալով իւր տիրոջ պահանջը։

—Հոգիս, խելքի եկ, ձին չէ կարող ծառը բարձրանալ, այդ չտեսուած բան է, մի շարշարիր խզուր խեղճ ձիուդ։

—Ինչպէ՞ս, Գապի ջան, ախր սորա մայրը բարձրացել է . . .

—Հա՜, որ դորա մայրը բարձրացել է, դա էլ

կը բարձրանայ. քշ՛իր, բալէս, անպատճառ կը բարձրանայ, քշ՛իր. ասաց ծերունին ու երեսը դարձնելով շարունակեց իւր ճամբէն։

Երիտասարդը ազդուած ծերունու խօսքերից, երկար կանգնած նայում էր նորա յետևից... Վերջը սթափուեց, արագ քշեց ձին դէպի քաղաքը ու կանգ առաւ իւր հայրական տան առաջ։ Հայրը տխուր նստած էր պատշգամբում. որդու գալը նա չնկատեց։

—Հայր, ներիր ինձ, ես սխալուած եմ, ասաց որդին չոքելով հօր առաջ. այժմ համոզուեցի, որ քո բոլոր ասածները ճիշտ են։

Ու այնուհետև պատմեց հօրը բոլոր պատահածը։

ՄՕՐ ԿԱԹԸ

(Պարսկական լեգենդա)

Փոքրիկ Ալին, որ թափառաշրջիկ երեխաներից մէկն էր, մի անգամ գողանում է հարևանի հաւնոցից մի ձու և ծածուկ հասցնում մօրը։ Ծանը ուտելու ոչինչ չէ լինում և մայրը ոչինչ չասելով, ճաշին գողացած ձուից ձուածեղ է պատրաստում որդու համար։ Ալին առանձին ախորժակով ու բաւականութեամբ է ուտում այդ „իւր սեպհական աշխատանքով վաստակած“ ձուածեղը։

Չէ անցնում մի քանի օր և նա մի ուրիշ հաւնոցից մի վառիկ է գողանում ու դարձեալ մօրը հասցնում։

Այդպէս շարունակում է Ալին ու մի օր սաղ գողանալով, մի ուրիշ անգամ ոչխար, յետոյ տներից ապրանքներ ու սրա նրա վրայ ծախելով—նա գողութիւնը սովորութիւն է դարձնում։

Այդպէս երկար չէ տևում. շուտով յայտնւում է գողութիւնը և նորան ձերբակալում են։ Բանտում երկար չէ մնում Ալին, մի գիշեր փախչում է ու այնուհետև սկսում աւազակային խումբ կազմել, յայտնի ճանապարհներից մէկը կտրել ու անց ու դարձ անող ճանապարհորդներ թալանել ու կոտորել։

Շահը վճռում է Ալիի գլխագինը մի մեծ գումար ու յայտարարում, որ ով Նորան կենդանի հասցնէ իրեն—Նորան կը յանձնուի այդ գումարը։

Մի օր Ալին լսում է, որ հարուստ բէկերից մէկը, որի հիանալի նժոյգները ամբողջ Պարսկաստանի հաւանութիւնն էին գտել, «Եյլաղից» *) վերադարձել է։ Կարծելով թէ յոգնած կը լինեն, նա նոյն գիշերը գնում է այդ նժոյգներից գողանալու։

Սկզբում գործը յաջողւում է և նա մի քանի նժոյգ մէկ մէկուց կապած դուրս է բերում. բայց բագում յանկարծ նժոյգներից մէկը խրխնջում է, որի ձայնից շները սկսում են հաչել, զգաստ ծառաները, որ երկար ճանապարհորդութիւնից յոգնած ննջում էին, իսկոյն զարթնում են, շան հաչոցի վրայ գնալով բռնում սայլերից մէկում ծածկուած Ալիին ու նոյն գիշերը հասցնում շահին։

—Վերջդ այդ չէ՞, անիրաւի ծնունդ, ասում է շահը ու հրամայում, որ միւս օրը անմիջապէս գլխատէն։

Հասնում է և միւս օրը։ Ալիին յանցաւորի շորերով բերում են գլխատման տեղը։ Անթիւ ու անհամար ամբոխի հաւաքուելուց յետոյ գալիս է և շահը ու հրամայում, որ բարձրացնեն։ Ալին դահճի միջոցաւ յայտնում է շահին, թէ խնդիրք ունէ։

*) Ամառուայ կացուրեան տեղ։

Շահը կանչում է իրեն մօտ ու իբրև մահապարտի վերջին խնդիրք՝ գիջում։

—Վսեմափայլ տէր, ասում է Ալին. թոյլ տուր մօրս տեսնել, վերջին փափագս առնել...

Շահը թոյլատրում է։

Քիչ ժամանակից յետոյ յայտնւում է և մայրը ու արտասուաթոր աչքերով մօտենում որդուն։

—Մա՞յր, մա՞յր. ձեռքերը աչքերին տանելով արտասուում է Ալին։

—Վա՜յ, բալայ. այս ինչ բերար գլխիս... հեկեկում է մայրը։

—Մա՞յր, հանգստացիր, այլևս ուշ է. տեսնում ես թէ այդքան մարդիկ անհամբերութեամբ ինչի են սպասում... Լսիր խնդիրքս. հալալ արա ինձ կաթդ, թող որ քո կենսատու ծիծը համբուրեմ ու այնպէս մեռնեմ։

Մայրը աւելի է զգայւում, մի քանի անհաստատ շարժումներ է անում ու բացելով «չարսաւը» *) —սեղմում որդուն կրծքին։

Յանկարծ լսւում է մի կանացի ճիչ և Ալիի գրկից մայրը ուշաթափ ընկնում է գետնին. որդին կծում է մօր ծիծը...

—Հարամ լինի այդ ծիծը, ասում է Ալին. ինչու երբ առաջին անգամ կեանքումս ձու գողացած բերայ քեզ տուի—դու ընդունեցիր ու... ինձ այս

*) Կանացի վերնազգեստ։

օրին հասցրեր... Մտացիր ուրեմն. պարտաճանաչ որդիտ վարձատրում է արժանաւոր մօրը...

Սարսափած ամբոխը սաստիկ զգացուած դէպքից, սպասում էր, թէ ինչով կըվերջանար այս բոլորը։

Քիչ յետոյ լսուեց և չահի խրոխտ հրամանը.

—Այնուամենայնիւ կախսպան։

ՎԵՐՋ,

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Կարելի է առնել.

Բագւում—պ. Թադ. Յովնաթեանի գրավաճառանոցում:

" Շահնազար Շահնազարեանի գրավաճառանոցում: (Տատարական փողոց)

Դիմել հեղինակին՝

Баку, Магазинъ Малхазова. Григорію Базазъ-Агаджанянцу.

ՀՀ Ազգային գրադարան
NL0339280

22.926

891.99
F-17